CONCOURS D'ENTREE 2023-2024/ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹ 2023-2024

ARMENIEN / ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

19/06/2023

Temps imparti / Ժամանակը: 150 minutes / 150 րոպե
Les dictionnaires ne sont pas autorisés. /Բառարանների գործածումն արգելվում է:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Բոլոր առաջադրանքները կատարել տրամադրված հարցարանների համապատասխան բաժիններում՝ առանց ավելորդ անգամ արտագրելու:

Առաջադրանք 1. (11 միավոր)
1.1. առաջադրանքը գնահատվում է 9 միավոր: Յուրաքանչյուր սխալ կետադրման համար հանվում է 0,25 միավոր, յուրաքանչյուր սխալ ուղղագրության համար՝ 0,5 միավոր:
1.2. և 1.3. առաջադրանքների ճիշտ պատասխանները գնահատվում են 1-ական միավոր:
Առաջադրանք 2. (7 միավոր)
2.1. առաջադրանքի համար տրվում է 3 միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:
2.2. առաջադրանքի համար տրվում է 4 միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:
Առաջադրանք 3. (8 միավոր)
3.1., 3.2. առաջադրանքների համար տրվում է 3-ական միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:
3.3. առաջադրանքը գնահատվում է 2 միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:
Առաջադրանք 4. (8 միավոր)
4.1., 4,2 առաջադրանքները գնահատվում են 2-ական միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:
4.3. առաջադրանքը գնահատվում է 4 միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր (8 կամ 9 ճիշտ պատասխանը գնահատվում է 4 միավոր):
Առաջադրանք 5. (6 միավոր)
5.1. և 5.2. առաջադրանքների համար տրվում է 2-ական միավոր. յուրաքանչյուր ամբողջական ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:
5.3. և 5.4. առաջադրանքների ճիշտ պատասխանները գնահատվում են 1-ական միավոր:

Յուրաքանչյուր հարակից սխալի համար հանվում է 0,25 միավոր:

Առաջադրանք 1 (11 միավոր)

1.1. Անհրաժեշտության դեպքում լրացնել տառերը և կետադրել բնագիրը (9 միավոր):

Նկարիչը մոտեցավ հայելուն՝քանդակազարդ շրջանակի մեջ: Բայց այն, ինչ նայում էր այնտեղից, ավելի զարհուրելի էր այն հրեշներից, որոնք երևում էին գիշերը: Մի՞թե սա ինքն է: Մազերը զզզզված էին, վիթխարի աչքերը խրվել էին խոր խոռոչների մեջ, թավ հոնքերը ծիծաղաշարժ զիզզազներով թեքվել են դեպի ճակատը, քթից դեպի բերանի անկյուններն էին ձգվել ակոսներ, իսկ շրթունքները՝ ամբողջովին անարյուն, ծռվել են հիմարաբար: Մռայլ ու անզոր երեսը քարացած էր. այդպես բռնված գազանի տեսքն է սովորաբար լինում:

Հայելուց գիրթ շրջվելով՝ նստեց բազկաթոռին, և աչքերը փակվեցին: Այդպես նա նստեց որոշ ժամանակ, որ, ձգվելով ընդxամենը մի քանի րոպե, նրան հավիտենականություն թվաց: Արթնանալով միջօրեին՝ նա սոսկումով նկատեց՝ նորից ու նորից խլացել է և ընկղմվել անհաղթահարելի լռության մեջ: Ցասումով ու հապշտակությամբ նա մտածում էր, որ այս աշխարհում իր լսած վերջին ձայները թռչունների՝ գարնան շնչով տոգորված գեղգեղանքն էին: Հիմա նա ամեն մեկին թերահավատությամբ է մոտենալու և կռվարար ծերուկի անուն է վաստակելու, մինչդեռ իրականում ինքն ամենևին այդպիսին չէ: Նա սիրում է աղմկալից շրջապատ և ուզում է ուրիշներին հաղորդակից անել իր և՛ ուրախությանը, և՛ վշտին, բայց խլությունը նրան դարձնելու է նաև համր: Բժշկի՝ խղճահարությամբ համեմված սփոփանքներն ու դեղուդարմանը ցույց էին տալիս՝ ինչպիսի տառապանքներ է խոստանում իրեն ապագայում սահմռկեցուցիչ համրությունը: Բայց ինքը սարսռազդու հիվանդությունից ուժեղ կգտնվի, և որևէ ցավ չի կարող ընկճել հանճարեղ նկարչին:

1.2. Նշել այն տողը, որի բոլոր բառերի բաղադրիչները գրվում են մեծատառով (1 միավոր):

1) ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ԴԻՆԱՍՏԻԱ, ԲԵՐՄՈՒԴՅԱՆ ԵՌԱՆԿՅՈՒՆԻ, ՍՈՒՐԲ ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑԻ, ԱՆԲԱՆ ՀՈՒՌԻ

2) ԳՐԻԳՈՐԻՍ ԱՂԹԱՄԱՐՑԻ, ՆՈՐՎԵԳԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ՏՐԴԱՏ ԵՐՐՈՐԴ, ԷՋՄԻԱԾՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

3) ՆԵՐՔԻՆ ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ, ՆԱՐ-ԴՈՍ, ՀԱԿՈԲ ՄԵՂԱՊԱՐՏ, ՆԵՐՍԵՍ ԵՐՐՈՐԴ ՏԱՅԵՑԻ

4) ԲԱՀՐԵՅՆԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԹՈՎՄԱ ՄԵԾՈՓԵՑԻ, ԱՂԲՅՈՒՐ ՍԵՐՈԲ, ՊՈՂՈՍ ԱՌԱՔՅԱԼ

1.3. Նշել այն շարքը, որի բոլոր բառերի բոլոր բաղադրիչները գրվում են անջատ (1 միավոր):

1) հայր (իշխանություն), ի (սպաս) դնել, ընդ (որում), գլուխ (գլխի), մի (երկու)
2) տնից (տուն), իբրև (թե), Մասիսն (ի) վեր, վառ (դեղին), ըստ (կարգի)
3) թե (չէ), երկաթ (ուղի), ափ (հանել), ի (մի) բերել, արքայից (արքա)
4) թերի (բարձրագույն), խաղ (ընկեր), նոր (նորք), խաղող (օրինեք), հարյուր (քսան) ութ

2. Առաջադրանք 2 (7 միավոր)

2.1. Դեմ դիմաց գրված բառերից համապատասխան արմատներ և ցանկացած ածանց ընտրելով (յուրաքանչյուր բաղադրիչ գործածել մեկ անգամ) ՝ *կազմել վեց բարդածանցավոր բառ (3 միավոր):*

Գետաբերան	անցաթուղթ	ան	գետանցում
բազմաստեղնյան	շարքացան	իկ	ստեղնաշարային/բազմաշարային
հոդաբաշխ	էլեկտրակայան	ում	էլեկտրաբաշխիչ
ջրմուղ	հորդահոս	ային	ջրհորդան
դատավարություն	բռնագաղթ	ել	բռնադատել
պահապան	այսօր	իչ	օրապահիկ

2.2. Ընդգծել երկու ածանց ունեցող բառերը *(4 միավոր):*

Երբեմնի, արտառոց, համառոտ, ունակություն, համարյա, հակընդդեմ, հատորյակ, առարկա, ժանիքավոր, անդրավարտիք, օդապարիկ, բարունակ, հաղորդում, դիմացի, բանալի, տափակավուն:

Առաջադրանք 3 (8 միավոր)

3.1. Ընտրել և գրել հոմանիշների վեց զույգ (3 միավոր):

Հողակոշտ, մագիլ, մեծատուն, անորոշ, ճիրան, եղջյուր, գավ, տարտամ, գուղձ, ուննոր, կոտոշ, կթղա:

հողակոշտ– գուղձ
մագիլ–ճիրան
մեծատուն–ուննոր
անորոշ–տարտամ
եղջյուր–կոտոշ
գավ–կթղա

3.2. Ընտրել և գրել հականիշների վեց զույգ (3 միավոր):

Բարդ, ամբարտավան, լայնարձակ, դյուրին, շիտակ, կակուղ, անձուկ, ապիկար, համեստ, կոշտ, շինծու, կարող:

բարդ–դյուրին
ամբարտավան–համեստ
լայնարձակ–անձուկ
շիտակ–շինծու
կակուղ–կոշտ
ապիկար–կարող

3.3. Գտնել երկու շարք, որոնցում դարձվածքների իմաստների սխալ բացատրություն կա (2 միավոր):

ա) բերանը կեղտոտել – հայհոյել, իր վրա վերցնել – ստանձնել, ծեր աղվես – փորձառու և խորամանկ

բ) իրար ուտել – թշնամանալ, ծայր առնել – սկսվել, ծնկի իջնել – ենթարկվել

գ) շարքից դուրս գալ – առանձնանալ, փորը դատարկ – քաղցած, քամուն տալ - վատնել

դ) բերանը կապել – լռեցնել, գլխահան անել – մոլորեցնել, խոսք քաշել -խոսեցնել

ե) բռունցք թափ տալ – սպառնալ, գետինը մտնել – ամաչել, փոշի դառնալ – ոչնչանալ

զ) ոտքի տակի հող – կայունություն, ճակատ առ ճակատ – բացահայտ, իրար լեզու հասկանալ – մտերմանալ

Առաջադրանք 4 (8 միավոր)

4.1. Ընդգծել նախադասության մտքին համապատասխանող բառը (2 միավոր):

ա) Պեղումների (վերոբերյալ, վերաբերյալ) ներկայացված զեկուցման մեջ կային հետաքրքիր փաստեր հինավուրց քաղաքի մասին:

բ) Այդ տաղանդավոր պատանին (միաժամանակ, միառժամանակ) կարողանում մի քանի երաժշտական գործիք նվագել:

գ) Այդ ստոր (խաբկանքի, խաբեության) միջոցով հանցագործները ցանկանում էին խույս տալ պատասխանատվությունից:

դ) Տատիկը մեծ և սուր (մաղախով, մախաթով) կարում էր թոռնիկի վերմակը:

4.2. Փակագծերում տրված բառերը տեղադրել նախադասությունների մեջ՝ դրանք ենթարկելով համապատասխան փոփոխությունների (2 միավոր):

Հոր և մորեղբոր դավաճանությունը **վրդովել էր** երիտասարդին՝ նրա սիրտը **լցնելով** անզուսպ **կատաղությամբ,** և նա ընկել էր շփոթության մեջ՝ **չիմանալով** անելիքը:

(լցնել, կատաղություն, իմանալ,վրդովել)

4.3. Ընտրել և ընդգծել ճիշտ տարբերակները (4 միավոր):

Մի՛ փորիր, առանց թույլատվություն, **մատենագրեր**, ուշացրեցիր, **նավթահորեր, ի դեմս քեզ, փխրեցրինք,** հնարավորինս չափ, **ուղենիշներ,** բնութագիրներ, արագ կերպով, **հանքափորներ, բաժակակալներ**, մի՛ տանիր, բազմիցս անգամ, չի փախնի, ինչո՞ւ համար, ոչ մեկ, **գնահատել տալ:**

Առաջադրանք 5 (6 միավոր)

5.1. Նշել այն նախադասությունները, որոնցում խնդրառության սխալ կա և ուղղել սխալները (2 միավոր):

ա) Մենք ուշադիր հետևում էինք երեխաներին, որոնք ցնծագին գլուխկոնծի էին տալիս լպրծուն տախտակամած~~ում~~ **ին//ի վրա**:

բ) Նավապետը, կառչած չենթարկվող ղեկին, վերջին ճիգերն էր անում, որպեսզի նավազներին փրկի օվկիանոսի ահեղ ալիքներից:

գ) Ծերունին հանդարտ ուղղեց հոգնատանջ կուրծքը՝ երանությամբ նայելով վերահաս երեկոյ~~ից~~ **ին** անձնատուր եղող դաշտերին:

դ) Ես որոշ վերապահությամբ եմ վերաբերվում այդ հարցի քննարկումներին:

5.2. Նշել այն նախադասությունները, որոնցում համաձայնության սխալ կա և ուղղել սխալները (2 միավոր):

ա) Բոլոր կանխատեսումները, որ ներկայացվել **է~~ն~~ են,** սխալ դուրս եկան:

բ) Որսը նոր էր սկսվել, երբ վրա տվեց մի այնպիսի անձրև, որի նմանը ոչ ոք երբևէ չէր տեսել:

գ) Դժվարությամբ, բայց հնարավոր դարձա~~ն~~**վ** արգելքների վերացումը:

դ) Հաղթող մարզիկներից ոչ ոք չցանկացավ մասնակցել հանդիսավոր մրցանակաբաշխությանը:

5.3. Նշել պարզ նախադասությունը բարդ ստորադասականի փոխակերպելու ճիշտ տարբերակը (1 միավոր):

Այգեպանը խաղողի վազերն էտելիս որթերի հետևում տեսավ կծկված թունավոր օձին:

ա) Երբ այգեպանը խաղողի վազերն էր էտում, որթերի հետևում տեսավ կծկված թունավոր օձին:

բ) Այգեպանը, երբ խաղողի վազերն էր էտում, որթերի հետևում տեսավ թունավոր օձին, որ կծկված էր:

գ) Այգեպանը, հենց որ խաղողի վազերն էր էտում, որթերի հետևում տեսավ կծկված թունավոր օձին:

դ) Այգեպանը, երբ խաղողի վազերն էր էտում, որթերի հետևում տեսավ կծկված թունավոր օձին:

5.4. Նշել ուղղակի խոսքն անուղղակիի փոխակերպելու ճիշտ տարբերակը (1 միավոր):

Նրանք մեզ հարցրին.

-Դուք ինքներդ հասկանու՞մ եք, թե ինչ եք ասում, որ ուզում եք, որ մենք ձեզ հասկանանք:

ա) Նրանք մեզ հարցրին, թե նրանք իրենք հասկանո՞ւմ են արդյոք, թե ինչ ենք ասում, որ ուզում են, որ նրանք մեզ հասկանան:

բ) Նրանք մեզ հարցրին, թե մենք ինքներս հասկանո՞ւմ ենք արդյոք, թե ինչ ենք ասում, որ ուզում ենք, որ իրենք մեզ հասկանան:

գ) Նրանք մեզ հարցրին, թե մենք ինքներս հասկանո՞ւմ ենք արդյոք, թե ինչ են ասում, որ ուզում ենք, որ իրենք մեզ հասկանան:

դ) Նրանք մեզ հարցրին, թե մենք ինքներս հասկանո՞ւմ ենք արդյոք, թե ինչ ենք ասում, որ ուզում ենք, որ մեզ հասկանան: